

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N ՓՎ/116-2021

2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 26-ԻՆ ՀԵՌԱԿԱ՝ ԳՐԱՎՈՐ ՀԱՐՑՄԱՆ ԿԱՐԳՈՎ ԱՆՑԿԱՑՎԱԾ՝ ՀՅՈՒՄԻՍ-ՀԱՐԱՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔԻ, Մ-6, ՎԱՆԱՁՈՐ-ԱԼԱՎԵՐԴԻ-ՎՐԱՍՏԱՆԻ ՍԱՀՄԱՆ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ԱՎՏՈՄՈՐԻԼԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀԻ (ԿՄ 38+450 - ԿՄ 90 + 191 ՀԱՏՎԱԾ) ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԵՎ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ, ՔԱՂԱՔԱՅԻՆ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԵՎ ՀՅՈՒՄԻՍԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

---

### ք. Երևան

#### Խորհրդի անդամներ՝

Ս. Պապիկյան	ՀՀ փոխվարչապետ, Խորհրդի նախագահ
Գ. Սանոսյան	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար
Վ. Քերոբյան	ՀՀ էկոնոմիկայի նախարար
Կ. Անդերասյան	ՀՀ արդարադատության նախարար
Ռ. Պետրոսյան	ՀՀ շրջակա միջավայրի նախարար
Ք. Ղալեչյան	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ (ճանապարհային ոլորտը համակարգող)
Ս. Թովմասյան	Կադաստրի կոմիտեի ղեկավար
Հ. Սարգսյան	Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ (համաձայնությամբ, Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագրի շրջանակներում, ճանապարհաշինության բնագավառը համակարգող)
Ն. Մարտիրոսյան	«Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի տեղակալ-ծրագրի ղեկավար (համաձայնությամբ)
Ս. Մաչյան	«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի գործադիր տնօրեն

Կառավարման խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) նիստն իրականացվել է ս.թ. հոկտեմբերի 26-ին հեռակա՝ գրավոր հարցման կարգով: ՀՀ փոխվարչապետ, կառավարման խորհրդի նախագահ Ս. Պապիկյանի՝ ս.թ. հոկտեմբերի 14-ի թիվ 03.1/03.79/35522-2021 գրությամբ Խորհրդի անդամներին ուղարկվել է օրակարգը և կից նյութերը՝ Խորհրդի անդամներին առաջարկվելով իրականացնել գրավոր քվեարկություն:

Խորհրդի անդամների կողմից օրակարգի վերաբերյալ առարկություններ կամ առաջարկություններ չեն ստացվել, ուստի օրակարգը համարվել է հաստատված:

Համաձայն Խորհրդի աշխատակարգի 13-րդ կետի և սույն նիստի գրավոր քվեարկության արդյունքների՝ Խորհուրդն օրակարգում ներառված հարցերի վերաբերյալ կայացրեց հետևյալ որոշումը.

- 1. Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող Հայաստան-Վրաստան սահմանային տարածաշրջանային ճանապարհի (Մ6 Վանաձոր-Բագրատաշեն) բարելավման ծրագրի շրջանակներում 2017թ. նոյեմբերի 30-ին «Բլաք Սի գրուպ և ԱԱԲ Պրոեկտ համատեղ ձեռնարկության հետ կնքված շինարարական աշխատանքների CW-ICB-M6/2016-2 պայմանագրի N4 փոփոխման հրահանգի վերաբերյալ:**

#### **Քվեարկության արդյունքում Խորհուրդը որոշեց՝**

1. Հաստատել Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող Հայաստան-Վրաստան սահմանային տարածաշրջանային ճանապարհի (Մ6 Վանաձոր-Բագրատաշեն) բարելավման ծրագրի շրջանակներում 2017թ. նոյեմբերի 30-ին «Բլաք Սի գրուպ և ԱԱԲ Պրոեկտ» համատեղ ձեռնարկության հետ կնքված շինարարական աշխատանքների CW-ICB-M6/2016-2 պայմանագրի N4 փոփոխման հրահանգը:
2. Հանձնարարել «Ճանապարհային դեպարտամենտ» Հիմնադրամի գործադիր տնօրեն Ս. Մաջանին՝ գործող կարգին համապատասխան «Բլաք Սի գրուպ և ԱԱԲ Պրոեկտ» համատեղ ձեռնարկության հետ սեղմ ժամկետում ստորագրել 2017թ. նոյեմբերի 30-ին կնքված թիվ CW-ICB-M6/2016-2 պայմանագրի N4 փոփոխման հրահանգը:

- 2. Հյուսիս-Հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային Ծրագիր Տրանշ 2-ի շրջանակներում Մ1 Երևան-Գյումրի-Բավրա, Ագարակ համայնքի մոտակայքում կմ 29+600 մինչև կմ 37+545 ճանապարհահատվածի շինարարական աշխատանքների մրցութային գործընթացի վերաբերյալ:**

#### **Քվեարկության արդյունքում Խորհուրդը որոշեց՝**

1. Հաստատել Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի (Տրանշ 2) վերանայված գնումների պլանը:
2. Հանձնարարել «Ճանապարհային դեպարտամենտ» Հիմնադրամի գործադիր տնօրեն Ս. Մաջանին սկսել Մ1-Երևան-Գյումրի-Բավրա, Ագարակ համայնքի մոտակայքում կմ 29+600 մինչև կմ 37+545 /մոտ 8 կմ/ ճանապարհահատվածի շինարարական աշխատանքների ձեռքբերման մրցութային գործընթացը:

3. Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող Հայաստան-Վրաստան սահմանային տարածաշրջանային ճանապարհի (Մ6 Վանաձոր-Բագրատաշեն) բարելավման ծրագրի շրջանակներում 2017թ. նոյեմբերի 30-ին «Հորիզոն-95» ՍՊԸ և «Օբերոսլեր ԿԱՎՊԻԵՏՐՈՍ» ՍՊԸ համատեղ ձեռնարկության հետ կնքված շինարարական աշխատանքների CW-ICB-M6/2016-1 պայմանագրի N4 փոփոխման հրահանգի վերաբերյալ:

#### Քվեարկության արդյունքում խորհուրդը որոշեց՝

1. Հաստատել Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող Հայաստան-Վրաստան սահմանային տարածաշրջանային ճանապարհի (Մ6 Վանաձոր-Բագրատաշեն) բարելավման ծրագրի շրջանակներում 2017թ. նոյեմբերի 30-ին «Հորիզոն-95» ՍՊԸ և «Օբերոսլեր ԿԱՎՊԻԵՏՐՈՍ» ՍՊԸ համատեղ ձեռնարկության հետ կնքված շինարարական աշխատանքների CW-ICB-M6/2016-1 պայմանագրի N4 փոփոխման հրահանգը:
2. Հանձնարարել «Ճանապարհային դեպարտամենտ» Հիմնադրամի գործադիր տնօրեն Ս. Մաչյանին՝ գործող կարգին համապատասխան «Հորիզոն-95» ՍՊԸ և «Օբերոսլեր ԿԱՎՊԻԵՏՐՈՍ» ՍՊԸ համատեղ ձեռնարկության հետ սեղմ ժամկետում ստորագրել 2017թ. նոյեմբերի 30-ին կնքված թիվ CW-ICB-M6/2016-1 պայմանագրի N4 փոփոխման հրահանգը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ

ՍՈՒՐԵՆ ՊԱՊԻԿՅԱՆ